

ՄԵԹՐ Գ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԷՆ ԱՆԴԻՆ՝  
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ  
3 ԶՈԿԱՏՆԵՐԸ

ՊԷՅՐՈՒԹ 1996  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝  
«ԼԻԲ. ԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ»Ի

# ՍԱՐԴԱՐԱՊԱՏԷՆ ԱՆԴԻՆ՝ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ 3 ՋՈԿԱՏՆԵՐԸ՝

Տասնեւեօրեայ դարերէ ի վեր, հայ ժողովուրդի հաւաքական գոյութեամբ և ամոր ազգութեամբ և ամոր ազգ. - մշակութային ինքնութեամբ կը սպառնան այնպիսի տարադուրեամբ վտանգներ, որոնք ամոր ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆԸ վերածած են շարունակական ԳՈՅԱՄԱՐՏԻ մը, որուն Մասիսները դարձած են՝ ցարդ, Աւարայրի (451 թ. Մայիս 26) և Սարգսրապատի (1918 թ. Մայիս 26) գոյամարտերը: Այսօր, հայ ժողովուրդը կը դիմագրաւէ անիլի բարդ ու անիլի օրհասական սարգսրապատեր:

Այսօր, Հայութեամբ ընդհանրական Գոյամարտը կը շարունակուի՝ Սարգսրապատէն անդին, երեք հազարներու վրայ, ամոր բաղկացուցիչ երեք մասերէն իւրաքանչիւրին պարտադրելով *իրեն յատուկ գոյամարտ* մը, իւրաքանչիւրը վերածելով *մարտընչող յատուկ ջապահ ջոկատի* մը: Ասկէ՝ Համահայկական Գոյամարտի 3 ջոկատներու գոյառումը:

Առաջինը՝ Հայաստանի Հանրապետութիւնն է, որ Արեւելահայաստանի մէջ վերականգնած հայ պետականութեան Գ. հանրապետութիւնն է, յաջորդելով Խ. Հայաստանի Բ. հանրապետութեան, տակաւին կ'ապրի *իր կայացումի* անցումային հանգրուանի թգնածամբ, լինելութեամբ դժուարին երկունք մը, գոյատեւութեամբ ի խնդիր՝ կողմնորոշումի լինել-չլինելու երկընտրանք մը, *իրեն յատուկ գոյամարտ* մը, և կը գտնուի՝ արտաքին (եղաբանութեամբ) ու ներքին (ընկերամշակութային) հակադիր ու իրարամերձ ճնշումներու ներքին: Ասիկա *համահայկական Գոյամարտը* չէ առանձինն, այլ մէկ *օղակը* անոր, մէկ *օղակը*՝ Հայ Դատին:

Երկրորդ օղակը՝ արցախահայութեան մղած *ուրոյն գոյամարտն* է, ազատ *ինքնորոշման* իրաւունքին հիմամբ՝ որպէս ազատ հանրապետութիւն *գոյատուլի*, *նանաչում ձեռք բերելու* և *կայացումի* բազմախանգրում կոչի մը:

Իսկ հայաթափուած Արեւմտահայաստանի և սփիւռքացած Արեւմտահայութեան վերապրող իրաւայաջորդներս ալ՝ կը կազմենք Տարագիր Հայութեամբ ջոկատը, Համահայկական Գոյամարտի 3-րդ

(\*) Դասախօսութիւն՝ Լիբանանահայ Գրական Երջանակի Կեդրոնին մէջ, 19 Մայիս 1996 թուականին:

մարտնչող ու յառաջապահ ջոկատը, 3-րդ օդակը՝ Հայ Դատին:

Սարդարապատէն անդին, շարունակուող Համահայկական Գոյամարտի երեք ճակատներու յառաջապահ ջոկատներուն միջեւ, այսօր գոյութիւն ունի *պաշտօններու բնական բաժանում* մը, գոր կարելի չէ *անտեսել*, կարելի չէ *չբռնանցել* և գոր խանգարելը միայն վնասակար կրնայ ըլլալ՝ Համահայկական Գոյամարտին ու ռազմավարական հիմնական շահերուն:

Հայութեան քաղկացուցիչ այս երեք մասերուն *յատուկ* և իրարմէ *տարբեր* գոյամարտերու առկայութեան, և՛ անոնցմէ իւրաքանչիւրին համար Հայ Դատի ունեցած *տարբեր* քովանդակութեանց իրականութեան մասին, ուշագրաւ հաստատում մըն էր ՀՀ Նախագահ Լ.Տ. Պետրոսեանի մէկ ճշդումը, ՀՀԾ-ի Ե-րդ համագումարի բովէն, ուր կ'ըսէր՝ «ՀՀԾ-ի եւ ներկայ իշխանութիւնների համար Հայ Դատն այսօր՝ հայտնի պետականութեան կայացումն է», և միւս կողմէ՝ ակնարկելով Ղարաբաղի ջոկատին, ան կը ճշդէր՝ թէ հոն այսօր Հայ Դատը կը ճշանակէր «ԼՂ-ի հայապահպանումը»...: Նախագահը լուռ կ'անցնէր Տարագիր Հայութեան ջոկատին վրայէն, որուն *յատուկ գոյամարտին* ու հետապնդած Հայ Դատի քովանդակութեան շուրջ հարկ է որ մենք՝ տարագիր հայերս արտայայտուինք:

Հայութեան քաղկացուցիչ երեք մասերուն *յատուկ* գոյամարտերուն ու առաջադրամքներու *տարբերութեան* մասին, ուշագրաւ հաստատում մըն էր նաեւ՝ ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասեանի վերջերս կատարած ճշդումը՝ թէ Ստեփանակերտ հրաժարած է Հայաստանի միանալու իր նախկին որոշումէն, որովհետեւ՝ այդ որոշումը կը բախտէր միջազգային հանրային իրաւունքի և միջազգային հասարակութեան քաղաքականափոփոխական ընդդիմութեան ու մերժումին:

Ներկայ դասախօսութեան նիւթին սահմաններուն մէջ կ'իյնայ՝ Համահայկական Գոյամարտի երեք ջոկատներէն իւրաքանչիւրին ունեցած *միջազգային իրաւափոխակիտ* սահմանումն ու իւրաքանչիւր մարտնչող ջոկատի *յատուկ* առաջադրամքին գատորոշումը:

\* \* \*

Պատմական յետադարձ արագ ակնարկով մը կը տեսնենք՝ թէ Աւարայրի գոյամարտին մէջ, մենք թէեւ յաջողեցանք պահպանել մեր ազգային-մշակութային ինքնութիւնը և դիմագիծը, մեծամեծ մարդկային վնասներու գնով, բայց չկրցանք մեր սեփական կամքը քաղաքականօրէն պարտադրել մեր գոյութեան սպառնացող թշնամիին:

Տասնամեակներ վերջ միայն, Նուարակի դաշնագրով՝ մենք կրցամք այդ ընել: Այս *յապաղումը* հաւանարար կրնայինք կանխել մենք, եթէ՝ մեր հայրենասիրական մեծ խոյանքին, անօրինակ հերոսութեան, անձնուրաց խիզախութեան ու մեր ազգային մաքրամաքուր արժանապատուութեան պահպանումի ճանաչման հարողացած ըլլայինք միացնել նաեւ՝ *քաղաքական լայնահորիզոն մտածողութիւնը*, և ձերբագատուիլ՝ մեր *պատրանասիրութենէն*, *քնազանցականութենէն* ու *զգացական հայրենասիրութենէն*:

1915 թ. մեզի պարտադրուած օրհասը եւս՝ հաւանարար, կրնար տարբեր՝ Աուագ ծանրակշիռ, արդիւնեղով վերջանալ, եթէ՝ ազգովին ունեցած ըլլայինք քաղաքական լայնահորիզոն մտածողութիւն, կանխագուշակած ըլլայինք մութիւն մէջ Աւթուող սել ապագամ ու տեսած՝ «*հրիստոնեայ*» Արեւմուտի նեցուցութիւնն ու *Իթթիհատ Վէթերաքըր*-ի ոչ-յեղափոխական, այլ ցեղապաշտական էութիւնը:

1918 թ. Առյուծէս, Սարգսրապատի գոյամարտին մէջ, մենք դարձեալ կրնայինք, հաւանարար, աւելի ամօրէն պահպանել մեր ինքնութիւնն ու հողը, և մերժել ստորագրել Պաթումի ստրկական դաշնագիրը, աւելի լաւ կերպով արժեցնել այդ համաժողովրդային հերոսամարտին յարթանակը, եթէ՝ ունեցած ըլլայինք քաղաքական լայնահորիզոն մտածողութիւն, պատրանքներ սնուցած չըլլայինք՝ «*անկախութիւն*» գրաւիչ բառի հմայիլիւն և Արեւմուտի հզօրներու իսկական ծրագրերում շուրջ, և եթէ՝ սայթաքած չըլլայինք *արեւմտաթրքական* արեւելումի անդունդին մէջ, այլ տեսած՝ *ուսական արեւելումին փրկարար լոյսը*:

Աւելի ուշ, 1920 թ. Նոյեմբերի 29-ին, Արեւելահայաստանը վերապրեցաւ շնորհիւ ուսական արեւելումին և վերագատագրեց՝ թրքական գրաւումէն, հայկական հողատարածքներ, ինչպէս՝ Ալեքսանդրապոլի գաւառը ամբողջ, և՛ 10.000 թռ. քմ.ը վերածեց 30.000 թռ. քմ.ի, իսկ 700.000 շունչը բարձրացուց 3.5 միլիոնի, և մամաւանդ՝ կազմակերպեց պատմական ՆԵՐԳԱՂԹԸ, դէպի Երկիր շրջելով միւշ այդ թաւալող ԱՐՏԱԳԱՂԹԻ մեզ ձօնացնող ու կոտորակող անիր: Սւ, մեր շահը այսօր կրնար շատ աւելի մեծ ըլլալ, եթէ՝ գործած չըլլայինք, նախ՝ Ալեքսանդրապոլի դաշնագրի մեղքն ու յետոյ՝ «*Փետրուարեան*» արկածախնդրութեամ յանցանքը, ճիշդ այն օրերում՝ երբ Մոսկուայի մէջ տեղի կ'ունենային թուրքիստրիդային բանակցութիւններ, որոնցմէ ալ կախեալ էր Արեւելահայաստանի հողատարածքի սահմանագծումը: Բայց մենք դարձեալ չկրցամք թօթափել մեր պատրանքները՝ արեւմտաթրքական արեւելումին շուրջ, ու

չկրցամք առաւելագոյնս օգտուիլ ուսական արեւելումիմ ընձեռած  
եմարարութիւններէմ:

Այսօր եւս, Հայութեան երեք բաղկացուցիչ միաւորները, երեք  
տարբեր նակատներու վրայ՝ իւրաքանչիւր ջոկատի մղած յատուկ գո-  
յամարտիմ մէջ, կարիքը ունինք Քաղաքական լայնահորիզոն մտա-  
ծողութեան, առարկայական արեւելումիմ ու գիտական-բանական մե-  
տեցումիմ:

Գիտականութեան տարրական պայմանն է յստակօրէն տեսնել՝  
որ Ահսորի, Արցախի և Արեւելահայաստանի երեք ջոկատները իրար-  
մէ *անջատ* կեցութեամբ և իրարմէ *տարբեր* պայմաններու մէջ գտնուող  
միաւորներ եմ՝ իրենց *միջազգային իրաւամբնակներով*, *առարկայական*  
պայմաններով և գոյամարտի *չօչափելի* առաջադրանքներով, ունենա-  
լով հանդերձ՝ *հասարակաց* գերիխնդիրներ, հասարակաց թշնամիներ և  
մանաւանդ՝ *վերամիաւորումի*, այսինքն՝ *մէկ հայրենիք և մէկ ժողո-  
վուրդ* դառնալու վախճանական *միեւնոյն* ռազմավարական ու երկա-  
րաշունչ ծրագիր-մպատակը:

Եթէ չկարենամք տեսնել երեք ջոկատներու իրարմէ *անջատ* ու  
*տարբեր* միաւորներ ըլլալն ու իւրաքանչիւրին *յատուկ գոյամարտը*  
իրենց գտնուած տարբեր նակատներուն վրայ, և իւրաքանչիւրի *յա-  
ռաջապահ* դերը իր գտնուած նակատին վրայ, ոչ միայն կ'իյնանք  
իրաւասութեանց սահմաններու խախտումներու վնասարար և պա-  
ռակտումներու անհարկի փորձութեանց մէջ, — տկարացնելով երեք  
ջոկատներն ալ հաւասարապէս —, այլեւ՝ *սահմանափակած* կ'ըլլամք Հա-  
մահայկական Գոյամարտի իրական դաշտերը, քովանդակագրկած  
կ'ըլլամք Հայ Դատը, մենք մեզ գրկելով անոր ընձեռած Քաղաքական  
հօգօր գէնքէն, և մասնաւորաբար Տարագիր Հայութիւնը մղած կ'ըլ-  
լամք դէպի գանգաղ այլ ստոյգ անձնասպանութիւն՝ ՋՈՒԼՈՒՄ:

Այսպէս պատահեցաւ քսանական թուականներէմ միմչեւ 1965  
թ., Մեծ Եղեռնի յիսնամեակը, երբ՝ Խ. Հայաստանի կողմնակից կու-  
սակցութեանց համար, Խ. Հայաստանի գոյառումով՝ հիմնականօրէն,  
թեկուզ և մասնակի կերպով, լուծուած կը նկատուէր Հայ Դատը: Եւ  
այնուհետեւ՝ Հայ Դատը կը Ոչանակէր Խ. Հայաստանի զարգացումն  
ու բարգաւաճումը: Եւ՝ բարձի թողի կ'ըլլար, փաստականօրէն, Տա-  
րագիր Հայութեան մարտական դերը Հայ Դատի հետապնդումիմ մէջ,  
*դասալիք կ'ըլլար իրեն յատուկ գոյամարտէն* ու կ'այլասերէր: Նոյնպէս,  
Խ. Հայաստանի հակադրուող Հ.Յ.Դ. — ի համար ալ, Հայ Դատը *քովան-  
դակութիւնն ու թիրախ փոխելով* կը վերածուէր՝ Խ. Հայաստանը Խ.  
Միութեան կազմէն դուրս քաշելու (ազատագրելու) առաջնահերթ

առաջադրամքի, Հայ Դատի հետապնդումի նախապայմանի... և՛ դարձնել, բարձի թողի կ'ըլլար, փաստականօրէն, Տարագիր Հայութեան յատուկ գոյամարտը...: Առաջինները կ'ապաւինէին Խ. Միութեան, իսկ վերջինը՝ ԱՄՆ-ի ղեկավարած «ազատ աշխարհ»ին...: Երկու կողմերն ալ վարակուած էին *ապաւինողականութեան* ախտով, և՛ քաղաքականօրէն, դեռ կը մնային *անչափահասութեան* տարիքին մէջ...:

Ներկայիս ալ, կարգ մը շրջանակներ՝ բնագնացական մտածումով, կը կարծեն՝ թէ արդէն գէթ զգացականօրէն, իրականացած է *մէկ հայրենիք և մէկ ժողովուրդ* վախճանական նպատակը, թէ հարկ է միաձուլուած տեսնել երեք ջոկատները (եթէ Առյձիսկ միաձուլուած չեն *իրապէս և առարկայականօրէն*), և թէ՛ *մէկացած* է Գոյամարտը, և Հայ Դատի *միակ* թիրախը դարձած է *պետականութեան կայացումը* Արեւելահայաստանի մէջ: Հապա՞ Արցախի ֆակտը, որ Արեւելահայաստանի վաեանն է թաթարական սպառնալիքին դէմ, իսկ Տարագիր Հայութեան՝ նակատը՝ որ ընդհանրապէս Հայ լինելութեան սպառնացող Բանթուրքիզմի դէմ, *պաշտպանութեան առաջին* ֆակտն է: Տարագիր Հայութեան՝ սփիւռքացած ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ, առանձին ջոկատի *գոյութեան* և անոր *ազմավարական կարելոր դերին* ուրացումով է որ՝ տասնամեակներու ընթացքին և անզգայարար, պատմական յիշողութեան աղօտացումով, սփիւռքահայութեան մօտ ՏԱՐԱԳԻՐԻ ինքնութեան գիտակցութիւնը փոխարինուեցաւ ՏԱՐԱԲՆԱԿԻ մեղկ զգացումով: Այսպիսով, աղիտալի համեմատութեամբ Ասիանցեց սփիւռքահայութեան Հայ Դատի յանձնառութիւնը և անոր իւրայատուկ գոյամարտին դիմադրականութիւնը: Այս Ասիանցը արագացնող ազդակ մը հանդիսացաւ Ասի ազատ շուկայական այն սուտ ֆարզչութիւնը՝ թէ Բանթուրքիզմը խրտուիլակ մըն է լոկ: Մինչդեռ՝ Բանթուրքիզմի *«սուանողական ծրագրերը Հայաստանի և Հայ ժողովուրդի համար շարունակուած են ապագայի գլխաւոր սպառնալիք լինել»*, ինչպէս կը հաստատէ՝ Ռազմավարական և Ազգային Հետազօտութիւնների Հայկ. Կենտրոնի 1994 թ. Ամբան հրատարակած վերլուծական անդրադարձը, որ խորագրուած է՝ *«Հայեացք Ռազմավարական Հիմնահարցերին»*: Եւ՝ իրաւամբ:

Հայ Դատի կամ Համահայկական Գոյամարտի այսպիսի *սահմանափակում*, երեք ջոկատներու պաշտօններու այսպիսի *կրճատում* կամ *մէկացում*՝ ձեռնարկ է միայն մեր գոյութեան թշնամիներուն և անոնց ռազմավարական գիմակիցներուն, - Թուրքիոյ, Սիւնիզմի և Արեւմուտքի կայսերապաշտ տէրութիւններուն: Նաեւ՝ *դասալիք* այն

հայերում, որոնք Արեւելահայաստանին ու Արցախին օգնելու պատրուակով՝ փախուստ կու տամ Տարագիր Հայութեան վերապահ-  
ւած *յատուկ գոյամարտին* պահանջած շատ անլի դժուար պայման-  
ներէն ու այլարձոյթ գոհողութիւններէն, իրենց վիճակուած *բուն  
յանձնատու թիւնն* . . . :

Այսպիսի սահմանափակում՝ Հայ Դատի րովանդակութեամ, ան-  
փոխհատուցանելի կորուստ է Հայութեան երեք ջոկատներուն համար  
ալ, առանց բացառութեան: Ոչ մէկը անոնցմէ կրնայ իրօք շահիլ մման  
սահմանափակումէ, կրնատումէ և մէկացումէ, բացի՝ մեր թշնամիներէն:

Եւ դասալիք այդ սփիւտհայերը ամոմք են՝ որոնք արդէն կոր-  
սընցուցած են իրենց ՏԱՐԱԳԻՐԻ իմքնութեան գիտակցութիւնը և  
դարձեր են լոկ ՏԱՐԱԲՆԱԿ հայեր: Այդպիսիները «Ոոր տիպարի»  
հայեր են, մոր ժամանակներու ծնունդ . . . շուկայական բարքերով  
շաղուած «իրապաշտ» աշխարհաբաղաբացիներ, *հաւատազուրկ* ու ոչ  
*յանձնատու* հայեր:

Այստեղ հարկ է նաեւ յստակացնել գատորոշում մը՝ *հայապահ-  
պանումին* և *աշխարհագրական հայրենիքի* պահպանումին միջեւ:  
Առանց պատմական յիշողութեան՝ հայրենիքը կը դառնայ լոկ *աշխար-  
հագրական հողատարածք* մը, որուն վրայ կը քնակիմ ոչ անպայմանօրէն  
հայեր, այլ՝ ազգայնօրէն ոչ յանձնառու մարդիկ, աշխարհաբա-  
ղաբացի սպառողներ . . . : Հայրենիքէն դուրս անգամ՝ *պատմական  
յիշողութեամբ* ու *տարագիրի* գիտակցութեամբ, կարելի է հայապահ-  
պանումը, թեւ շատ դժուար և ոչ յաւիտենապէս: Հայրենի հողի վրայ  
և *օտար տիրապետութեան ներքեւ*՝ դարձեալ, հայապահպանումը կարե-  
լի է, նուազ դժուարութեամբ ինն տարագրութեան մէջ, բայց անպայ-  
մանօրէն՝ *պատմական յիշողութեամբ* և ազգային յանձնառութեամբ:  
Պատմական յիշողութիւնը կորսնցուցած անհատը՝ ըլլայ ան *հայրենա-  
բնակ* և ըլլայ *տարաբնակ*, չի կրնար պահպանել իր *հայկական* իմք-  
նութիւնը . . . :

\* \* \*

Իրենց կամքէն անկախաբար *տարբեր* նակատներու վրայ գտնը-  
ւող երեք ջոկատները ումին *հասարակաց մտահոգութիւններ* և *համա-  
հայկական նպատակներ*, բացի իրերօգնութեան, մեցակցութեամ և գի-  
րար պաշտպանելու պարտականութիւններէն և գիրար պաշտպանելու  
պարտականութիւններէն, որոնք կը բիծն իրենց ազգակցութենէն և  
ռազմավարական գիմակցութենէն:

1. — ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒՄԸ, այսինքն՝ հայկականութեան պահպանումը, ազգային մշակոյթի և պատմական յիշողութեան պահպանումիմ համարով, այսինքն՝ *մշակութային գոյամարտի* մտահոգութիւնները:

2. — ԱԶԳԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ պահպանումը, այսինքն՝ ազգային շահերու և գերխնդիրներու համդէպ յանձնառութեամ գորացումը, որ կ'ենթադրէ *մարդկայնական արժէքներու* կառչածութիւնը քաջալերել ընդդէմ՝ *անհատապաշտութեան* ապազգային և հակա-ընկերային քարոզչութեան: Այսինքն՝ *քարոյական գոյամարտի* մտահոգութիւնները:

Իսկ համահայկական նպատակներն են՝

1. — ՀԱՅ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ սպառնացող բոլոր վտանգներուն և մասնաւորաբար *Բանթուրքիզմի* վտանգին դէմ զգոմութիւնը, դիմադրականութիւնը և ի հարկին մարտնչումը բոլոր միջոցներով, այսինքն՝ *Ֆիզիքական գոյամարտի* յաջող ելքի ապահովումը:

2. — ՎԵՐԱՄԻԱՒՈՐՈՒՄԻ վախճանական նպատակը: Այսինքն՝ հայ ժողովուրդի բոլոր քաղկացուցիչներու և հայ հողի բոլոր ազատագրուած մասերու վերամիաւորումը՝ *մէկ և միասնական պետութեան մը մէջ*, որպէս *ուսմավարական գերագոյն նպատակ*, որպէսզի *փաստականօրէն* դառնանք *մէկ ժողովուրդ մէկ հայրենիքի մէջ*, որպէսզի *մէկանայ մեր լինելութիւնը և լինելութեան պայքարը*: Ռազմավարական այս գերագոյն նպատակի իրագործումիմ դէմ գլխաւոր խոչընդոսն ու սպառնալիքը կը հանդիսանան՝ Բանթուրքիզմի նուանդական *ուսմ* ծրագիրները, որոնք առկայ են երեք ջոկատներու լինելութեան դէմ հաւասարապէս, և որոնք կը վայելեն հովանաւորութիւնն ու քաջալերանքը ներկայ միաքեւեռ աշխարհի Ոստիկանապետին, որուն *ուսմավարական գիմակիցն* է արդի Թուրքիան...:

Հետեւաբար, Համահայկական Գոյամարտի հետապնդած ՎԵՐԱՄԻԱՒՈՐՈՒՄԻ վախճանական (ուսմավարական) այս հասարակաց նպատակը կը պահանջէ *համապատասխան ուսմավարութիւն*, իրաքանչիւր ջոկատին արտօնելով հանդերձ *մարտավարական* ազատութեամ լուսանցք մը: Առանձին մարտավարութիւնները՝ սակայն, չեն կրնար յանգիլ համահայկական նպատակի իրագործումիմ, եթէ երեք ջոկատներն ալ մշակած չեն *ուսմավարութիւն* մը, որ կը մեկնի Բանթուրքիզմի վտանգիմ իրականութենէն և նկատի կ'ունենայ՝ այդ վտանգիմ նկատմամբ, աշխարհաքաղաքական տեղաշարժերու ունենալիք դրակա՞ն թէ ժխտական ազդեցութիւններէն...:



Իրենց կամքէն անկախաբար տարբեր ճակատներու վրայ գտնուող երեք ջոկատները ունին նաեւ *Նկատառելի տարբերութիւններ* իրարմէ:

*Նկատառելի տարբերութիւններն են՝*

1. — Հայակերտումի և հայապահպանումի *միջոցներու* և այդ միջոցներու *արդիւնաւորութեան տոկոսներու* տարբերութիւնները, որպէս հետեւանք հիմնովին տարբեր պայմաններու, որոնց մէջ կը գտնուին երեք ջոկատները փաստակաւօրէն:

2. — Մշակութային-Քաղաքական մթնոլորտներու և տնտեսավարչական դրութիւններու տարբերութիւնները և անոնց *դրական-ժխտական* ուղղակի ազդեցութիւնը իւրաքանչիւր ջոկատի վրայ: Մասնաւորաբար Տարագիր Հայութեան ջոկատի պարագային, որ կ'ապրի *ոչ-հայկական* հողերու վրայ և *ոչ իսկ համախումբ* ու *միակ* երկրի մը մէջ, այլ՝ *աշխարհացրիւ* վիճակի մէջ: (Վիճակ մը, որուն յոռի և ժխտական ազդեցութիւնները կարելի է նուազեցնել և տեղտեղ ալ չէզոքացնել, և նոյնիսկ՝ այդ վիճակէն առանցութիւններ ստեղծել, եթէ՝ համագաղութային տարողութեամբ և արդիական մակարդակով վերակազմակերպուի Տարագիր Հայութեան ջոկատը՝ *կեդրոնական* մարմիններու մէջ):

3. — Ջոկատներէն իւրաքանչիւրին ունեցած *միջազգային իրաւամիճակին* (կարգավիճակին) քացորոշ տարբերութիւնը միւս երկու ջոկատներու ունեցած իրաւամիճակներէն: Միջազգային իրաւամիճակներու այս տարբերութիւնները *առարկայական* և *անչրջանցելի* են, գոթա չենք կրնար անտեսել կամ ջնջել *միակողմանիօրէն*, *կամայականօրէն* կամ *ենթակայականօրէն*:

4. — Վերոյիշեալ առարկայական տարբերութիւններն ալ կը պայմանաւորեն երեք ջոկատներու քաղաքական պայքարի ծրագրերու և մարտավարութեանց տարբերութիւնները, ինչպէս նաեւ՝ անոնց ազգային առաջադրանքներու և իւրայատուկ գոյամարտի կարգախօսներու միջեւ առաջնահերթութեանց կարգին տարբերութիւնները:

Ինչ խօսք՝ որ Համահայկական Գոյամարտի երեք ջոկատներու *հասարակաց* մտահոգութիւններու և նպատակներու, ինչպէս նաեւ՝ անոնց միջեւ *Նկատառելի տարբերութիւններու* այստեղ ուրուագծուած նախնական պատկերին աւելի խոր *բազդատական ուսումնասիրութիւնը* խիստ ուսանելի պիտի ըլլար երեք ջոկատներուն համար ալ՝ հա-

լասարապէս: Այս խիստ կեանական խնդրին սպառիչ ու գիտական ուսումնասիրութիւնը հարկ է որ անյապաղ կատարեն (կամ՝ աւարտեն ու հրատարակեն, եթէ ձեռնարկած են ատոր) հայկական հետազոտական կեդրոնները:

Այսօր, ես կ'ուզեմ (և կրճամ) միմիայն անդրադառնալ երեք ջոկատներու նկատառելի տարբերութեանց 3-րդ կետին, որ կը վերաբերի այդ ջոկատներու *միջազգային իրաւաւիճակներու* տարբերութեանց, ներկայիս գործող միջազգային հանրային իրաւունքի լոյսին տակ:

Ինչո՞ւ այս ընտրութիւնը, որո՞նք են այս նիւթին ներկայացուցած շահեկանութիւնները:

ա. — Ընդհանրապէս *իրաւագիտութիւնը* և մասնաւորապէս ջոկատներու միջազգային իրաւաւիճակներու ուսումնասիրութիւնը՝ գրեթէ *խուպան* մնացած մարզ մըն է մեր մօտ: Կարծե՛ք՝ մեր քաղաքական, կրթական ու մշակութային կեանքի դեկին գլուխ կանգնած մարդիկ «աղքատ խնամի» դիրքին մղած են իրաւագիտութիւնը...: Հետեւաբար, այս նիւթին ընտրութեամբ՝ անոր վրայ ուշադրութիւն հրաւիրելու պարտականութիւնը ստանձնած կ'ըլլամ:

բ. — Իրաւաւիճակներու տարբերութեանց մասին այս հրատարակային ֆենարկուիք խիստ օգտակար պիտի ըլլայ՝ *շարք մը անհասկացողութիւններ փարատելու* տեսակետէն: Որովհետեւ՝ պիտի յստականայ երեք ջոկատներու միջեւ *պաշտօններու բանական* (ուսցիոնայ) *բաժանումը*, իրաւագիտական սահմանումներու և սահմանագծումներու հիմամբ, այսպիսով առաջին առնելով անհարկի և ամուլ վէներուն ու պատակասումներուն:

գ. — Նաեւ՝ ցոյց պիտի տայ, թէ ինչպէ՞ս պէտք է հետապնդել Հայ Դատը միջազգային գծով վրայ, և թէ՛ որքան երկա՛ր ժամանակ կարսնցուցած ենք մենք, իրաւագիտութեան հանդէպ մեր ցուցարեքած արեամարհանքին, մեր կուսակցամոլութեան, մեր ոչ լայնահորիզոն քաղաքական մտածողութեան և երեք ջոկատներու միջեւ պաշտօններու բանական բաժանումի սկզբունքը չյարգելուն հետեւանքներով:

Ուրեմն, նախ պիտի փորձեմ՝ ոչ անդ մասնագիտական այլ հանրամատչելի կերպով, սահմանել *երեք ջոկատներու միջազգային իրաւաւիճակները՝ այսօրուայ դրութեամբ*, մասնաւորաբար ծանրանալով Տարագիր Հայութեան ջոկատին վրայ: Ապա՝ պիտի փորձեմ պարզաբանել երեք ջոկատներու *կազմակերպչական անկախութեան* սկզբունքը յարգելու հարկադրանքը, և այդ սկզբունքի խախտումին ժխտական հետեւանքները:

Համաձայն Միագգ. Հանրային Իրաւունքի և համաշխարհային հռչակագրերու մէջ ընդունուած սկզբունքներուն և նորմերուն՝

ա.— Հայաստանի Հանրապետութիւնը՝ որ պատմական Արեւելահայաստանն է, իր ներկայի սահմաններով կը վայելէ այսօր՝ անկախ ու գերիշխան պետութեան մը իրաւովիմակը: ՀՀ-ը ունի լիիրաւ իրաւական անձնատրութիւն (personne morale) միջ-պետական յարաբերութեանց մէջ և միջազգային ստեաններու առջեւ: Լիիրաւ անդամն է Անկախ Պետութիւններու Հանրակցութեան և ՄԱԿ-ի, և՛ ապագային, կրնայ ինքնիշխանօրէն անդամակցիլ որեւէ միջազգային կամ շրջանային միաւորումի՝ դաշնակցային կամ համադաշնակցային կապերով: Որպէս պետութիւն՝ Միջագգ. Հանր. Իրաւունքի «եմքակայ» (sujet, subject) է: Այսինքն՝ կրնայ տիրութիւն ընել իր իրաւունքներուն վրայ, նաեւ՝ կը կրէ պատասխանատւութիւնը իր քայլերուն, միջազգային յարաբերութեանց մէջ և միջազգային ստեաններու առջեւ:

բ.— Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւնը՝ որ Խորհրդային Սահմանադրութեան մէջ «ինքնավար մարզ»ի կարգավիճակ ունէր, տակաւին զուրկ է անկախ ու գերիշխան պետութեան մը իրաւովիմակէն և չունի լիիրաւ միջազգային իրաւական անձնատրութիւն: ԼՂՀ-ը հռչակուած է՝ միակողմանիօրէն, 2 Սեպտ. 1991-ին, քննադատութեան ընտրեալ մարմիններու պատգամաւորներուն կողմէ, հիմնը-ւելով՝ ազգերու ազատ ինքնորոշման իրաւունքին վրայ: Իրաւումը՝ որ ընդունուած է Միջագգ. Հանր. Իրաւունքին մէջ, և հռչակուած՝ համաշխարհային խորհրդածոդովներու և ՄԱԿ-ի կողմէ, որպէս՝ ժողովուրդներու իրաւանց անբաժանելի մասը: ԼՂՀ-ը ներկայիս կը պայքարի ի խնդիր միջազգային ճանաչումի: Բայց ցարդ՝ ոչ մէկ այլ պետութիւն ճանչցած է ԼՂՀ-ը, ոչ իսկ՝ Հայաստանի Հանրապետութիւնը: Խաղաղութեան քանակցութիւններու ճամբով՝ ԼՂՀ-ը որոշ աստիճանի իրողական (de facto) ճանաչում ձեռք բերած է արդէն: Սակայն, Ատրպէյճան ցարդ կը խուսափի նոյնիսկ իրողական ճանաչումի ամենայնոքի ստիճանէն, միշտ գայն նկատելով իր հողատարածքի անբաժանելի մասը: ԼՂՀ-ը ներկայիս կը ջանայ անդամակցիլ ԱՊՀ-ին, այդպիսով միջազգային ճանաչում ձեռք ձգելու նպատակով: (Հոս տեղին է յիշել՝ թէ մօտիկ անցեալին, եթէ ընդունուած ըլլար՝ «ինքնավար Հանրապետութեան» կամ մանաւանդ՝ Վոյսկիի «յատուկ կառավարման դրութիւն» կարգավիճակի տարբերակը, Խ. Միութեան կազմալուծումի յաջորդող ԱՊՀ-ի ստեղծումով, Ղարաբաղ կը

դառնար ամոր անդամը՝ շատ անիի հեգաահ կերպով, խնայուած կ'ըլլայիմ մեր մեծամեծ կորուստները):

Պատմականօրէն, 1813-էն առաջ Ղարաբաղ մաս կը կազմէր Պարսկական Կայսրութեան, բայց՝ *իրողական ինքնավարութեան* աստիճանով մը (Ռամսայի Մեխիֆուրիմները՝ Վարանդայի, Խաչէնի, Գիզակի, Զրաքերդի և Կիլիստանի): Կիլիստանի ռուս-պարսկական դաշնագրով Ղարաբաղ անցած էր Ռուսական Կայսրութեան: Լենինի օրով ևս, Ղարաբաղ՝ Նախիջեւանի և Զանգեզուրի հետ միասին, նկատուած էր «վիճելի տարածք», որուն ճակատագիրը պէտք էր որոշուէր տեղական բնակչութեան կամքով, համրաբուէով: Իսկ Ստալինի օրով, հակառակ կամայական կարգադրութեան, Ղարաբաղ պահած է գէթ «*ինքնավար մարզ*»ի կարգավիճակը Խ. Սահմանադրութեան մէջ: Եւ, խորհրդային իրաւական-պետական տեսութեան մէջ, «*ինքնավար մարզ*»ը ունի *ազգային-էթնիքական* հիմք, և՛ *նախատիպն* է *լիարիւն ազգային պետութեան*: Ինչ որ կը նշանակէ՝ թէ Խ. Սահմանադրութեան մէջ, իրաւականօրէն (*de jure*) նանչցուած ու երաշխաւորուած էր Ղարաբաղի ազգային-էթնիքական իմքնավարութիւնը: Միջազգ. Հանր. Իրաւումքի և խորհրդային իրաւագիտութեան բաղդատական ուսումնասիրութիւնը խիստ օգտակար է՝ *ԼՂՀ պետութեան* իրաւական հիմքերը ամրապնդելու համար:

գ. — *Տարագիր Հայութիւնը*՝ որ իրաւաչօքորդն է սփիւռեացած Արեւմտահայութեան ու բռնագրաւուած-հայաթափուած Արեւմտահայաստանի, ցարդ չունի *իրաւական անձնաւորութիւն* և *որեւէ աստիճանի միջազգային իրաւավիճակ*: ՆԱՆՄԷՆԵԱՆ անցագիրը անցեալին միջազգային իրաւավիճակ մը՝ *տարագրեալ-գաղթականի*, կուտար թրքական կառավարութեան կողմէ տեղահանուած հայութեան: Այսօր այդ ալ վերացուած է և մենք գուրկ ենք որեւէ ձեւի «*հաւաքականութիւն*» մը ներկայացնելու *իրաւական* հիմքէ, և հպատակներն ենք ու բաղաբացիները մեր գտնուած երկիրներուն:

Հետեւաբար, *Տարագիր Հայութեան առաջին կարեւորագոյն* ջանք պիտի ըլլայ՝ որպէս *տարագրեալ ու հայրենազուրկ հաւաքականութիւն* մը ճանչցուիլը: Որպէս *հաւաքականութիւն* այս ճանաչումն է որ *Տարագիր Հայութեան* պիտի տայ *իրաւական անձնաւորութիւն* ու *միջազգային իրաւավիճակ*: Բայց որպէս հաւաքականութիւն ճանաչում ձեռք բերելու համար, մենք պարտաւոր ենք ստեղծելու այդ *հաւաքականութիւնը ընդգրկող կազմակերպութիւնը*, որպէս հայ տարագիրներու *կեդրոնական, ներկայացուցչական* ու *միակ լիազօր* կազմակերպութիւն: Այսպիսի կազմակերպութիւնն է միայն՝ որ աշխարհացրիւ և օտար

հպատակութեամբ տարագրեալ հայութեան կրնայ վերադարձնել Տարագիր Հայութիւն կամ Հայրենագուրկ ժողովուրդ որպէս նախա-չումբ:

Եթէ ցարդ չենք յաջողած ստեղծել նման կազմակերպութիւն և իրաւական անձնատրութիւն, այդ չի նշանակեր թէ անկարելի էր այդ կամ՝ անթոյլատրելի, Միջազգ. Հանր. Իրաւունքին կողմէ: Ընդհակառակը, մենք չենք յաջողած ստեղծել այդպիսի կազմակերպութիւն՝ քանի որ, չենք կրցած ըստ արժանւոյն գնահատել միջազգ. իրաւական անձնատրութեան ճանաչումը ձեռք բերելու կարելիութիւնն ու անխուսափելի անհրաժեշտութիւնը... և չենք կրցած յաղթահարել մեր Աերհին հիւանդութիւնները՝ ապաւինողականութիւն, մենաստիքութիւն և կուսակցամոլութիւն: Եւ ուրեմն, չենք կրցած օգտուիլ Միջազգ. Հանր. Իրաւունքի ընձեռած լուրջ կարելիութիւններէն:

Որո՞նք են այդ կարելիութիւնները և ինչպէ՞ս կրնամք օգտուիլ անոնցմէ: Ահաւասիկ ուսումնասիրելի շատ կարելի ուրիշ խնդիր մը, գոր մենք ցարդ ազգովին ծուլացած ենք կատարելու, ուշացած ենք կատարելու:

Ներկայ դաստիարակութեամբ Անդ սահմանները հազիւ կ'արտօնեն՝ կիսամասնագիտական, հանրամատչելի ու մասնակի փորձ մը, գէթ ուրուագծային և ընդհանուր գաղափար մը տալու համար ակնարկը-ւած կարելիութիւններում մասին: Եւ այդ է որ պիտի փորձեմ այստեղ:

### Բ.— ԸՆԶԵՌՆՈՒԱԾ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախ եարկ է յստակացնել՝ թէ Միջազգ. Հանր. Իրաւունքը, վերջնականապէս ձեւաւորուած ու կամոնագրուած օրինագիրք մը չէ, քաթեչիդ մը չէ, այլ՝ որպէս մարդկայնական գիտութիւն, անընդհատ զարգացումի, լրացումներու և կատարելագործումի ընթացքի մը մէջ է: Հետեւաբար, այս գիտութիւնը ընդունակ է հարստանալու՝ Աոր հիմնադրոյթներով ու նորմերով, մաւի՝ հիմ հիմնադրոյթներում տրուող նոր մեկնաբանութիւններով և անոնց կիրարկումի մարզերուն ընդարձակումով, այդ մարզերուն մէջ Աերառնելով Աորանոր հարցեր և խնդիրներ, որոնք նոյնաման են կամ գուրահեռ՝ հիմներուն:

Հետեւաբար, մենք՝ մասնաւորաբար հայ իրաւագէտները, պարտականութիւնը ունին ոչ միայն առաւելագոյնս օգտուելու Միջազգ. Հանր. Իրաւունքի ընձեռած կարելիութիւններէն, այլև՝ աստարելու այդ գիտութեան զարգացումին, կատարելագործումին և հարստացումին: Այսինքն՝ չմնալու լոկ նպատարնկալի, ապաւինողի և տեսակ մը

մակարոյծի «ամչափահասութեան» տարիփին մէջ, այլ նախաձեռնելու Ուանի՝ այդ գիտութեան կատարելագործումին, այլ իրաւագրկեալ ժողովուրդներու ալ արդար դատերուն արդար լուծումներ գտնելու մարդկայնական մղումով ու տիեզերական տեսլականով: Ինչ որ Հայ Դատի միջազգայնացման աւելի ընդունելի ուղին է և գործելակերպը:

Բայց, դժբախտաբար, մենք ոչ միայն ցարդ չենք սատարած այդ գիտութեան մարդկայնական ու մարդասիրական զարգացումին, այլ յի՛նչ ուրիշ կերպով չենք հետեւած այդ գիտութեան ցարդ արձանագրած նուաճումներուն: Լրջօրէն չենք փորձած օգտուիլ այդ նուաճումներէն, և ցարդ չենք փորձած Հայ Դատի ժամանակակից հետապնդումին համար հայթայթել ժամանակակից հնչողութեամբ պատճառաբանութիւններ, որոնք համաեւունչ ըլլան այդ գիտութեան նորագոյն նուաճումներուն: Կը կրկնենք 80 կամ 50 տարուայ հնութիւն ունեցող յանկերգը, որ սկսած է դադրիլ լսելի ըլլալէ:

Բայց, որո՞նք են ընձեռնուած կարելիութիւններէն գէթ մի քանիսն:

1. — 1976-ին, ՄԱԿ-ի հովանաւորութեամբ, Ալեքրիոյ մայրաքաղաքին մէջ գումարուած համաշխարհային խորհրդաժողովը՝ Արւիրուած «մտանդուած ժողովուրդներու իրաւունքներուն», հրապարակեց «ժողովուրդներու Իրաւանց Հռչակագիրը»: Այս հռչակագրով, ժողովուրդներու իրաւումները մարդու իրաւանց անխզելի մասը նկատուեցան, իսկ ժողովուրդներու իրաւունքներու շարքին ճանչցուեցաւ՝ «հայրենիք ունենալու» և «հայրենիք վերադառնալու» իրաւումքը: Ուրեմն, առաջին անգամ ըլլալով՝ պետութիւն չունեցող, անհայրենիք քաղաքութիւններ նկատուեցան որպէս «մտանդուած ժողովուրդներ», իսկ անոնց հայրենիք ունենալու կամ հայրենիք վերադառնալու իրաւումքը ճանչցուեցաւ անբաժանելի մասը Մարդու Իրաւանց, որ Աերկայիս գրեթէ միահեծան կ'իշխէ ոչ միայն Միջազգ. Հանր. Իրաւումքի գահին... այլ յի՛նչ միջազգային յարաբերութեանց և դիւանագիտութեան թատերաբեմին վրայ: Տարագիր հայերս ուրեմն կը հանդիսանանք «մտանդուած ժողովուրդ», որ ունի «հայրենիք վերադառնալու իրաւումք»: (Այս նուաճումին համար երախտաշատ աշխատանք ծաւալեց Լէլիօ Պասսօ Միջազգ. Հիմնարկը, որուն այս սիրագործութիւնը երախտագիտութեամբ, պարտիմք յիշել մենք):

2. — Նորագոյն դրական զարգացումներէն է Ուանի այն, որ 20 Գեկտ. 1993 թուականին, 45 տարիներու ձգձգումէ վերջ, ՄԱԿ-ը ստեղծեց «Մարդու Իրաւանց Բարձր Կոմիսար»ի պաշտօնը (որու նստատեղին կը գտնուի ժընեւի մէջ), իսկ պաշտօնատարի տիտղոսն է՝

«ՄԱԿ-ի Ենթա-Քարտուղար»։ Ան լայն իրաւասութիւններ կը վայելէ՝ հետապնդելու և պատիժներ առաջարկելու մարդու իրաւանց խախտումներուն դէմ։ Ձեռով մը՝ մարդու իրաւանց խախտումները դատող միջազգային *յատուկ* բայց մնայուն ատեան մը, որուն կրճամ դիմել *անհատներ* և *խումբեր*, *պետութեան* մը կամ *միջազգային կազմակերպութեան* մը միջոցով։

3. - Վերջին երկու տասնամեակներուն, ակներեւ դերակատարութիւն մը և հեղինակութիւն ձեռք բերին «*ոչ-կառավարական միջազգայնազմակերպութիւն*» (NGO, Non Governmental Organization) կոչուող կազմակերպութիւնները, որոնք իրատուի շահեցան՝ մնշում բանեցընելու բռնատիրական պետութեանց և մարդու իրաւունքները ռոնակոխող կառավարութեանց վրայ, և զանոնք ստիպելու՝ որպէսզի յարգեն միջազգային հոչակագրերն ու իրաւական նորմերը։ Այս կազմակերպութիւնները այսօր յաջողած են ստեղծել *միջազգային մարտընչող հանրային կարծիք մը*՝ վերջ դնելով կառավարութեանց ստեղծած *պաշտօնական* կայծիքի մեծաշնորհիւն ու ապատեղեկատուութեան։ Այս կազմակերպութիւնները փաստօրէն բանդած են Ոստի մերկի մը մերկին գործերուն մէջ *ոչ-միջամտութեան* միջազգային ընդհանուր սկզբունքին պարսիպը։ Այս սկզբունքը՝ Ոստիպէս, պետութեան մը ազգային գերիշխանութեան քացարձակ առանձնաշնորհումը կը մկատուէր։

Այս զարգացումներուն լոյսիւ տակ՝ հնարոյր դարձած է Հայ Դատի պահանջատիրութեան ցարդ բարձրացուցած «*ցեղապանութեան ճանաչում*»ի պահանջը, և ժամանակավրէպ՝ կուսակցութեանց կազմած Հայ Դատի յանձնախումբերու գործունէութիւնը միջազգային մակարդակի վրայ։ Հարկ է որդեգրել Հայ Դատի *ժամանակակից պատճառաբանութիւն*, որ համահունչ ըլլայ նոր զարգացումներուն հետ, և հարկ է հրաժարիլ *ժամանակավրէպ* յանձնախումբերէն և ստեղծել *ոչ-կառավարական միջազգային կազմակերպութիւններ* (NGO)։

Հայ Դատի ժամանակակից պատճառաբանութեան համար հարկ է որդեգրել «*ժողովուրդներու իրաւանց*» և «*մարդու իրաւանց*» հոչակագրերը, ինչպէս նաեւ՝ ժամանակակից դիւնագիտութեան գահին քազմած նոր գերակգրունքը, ըստ որուն՝ *բախումնային* հարցերը հարկ է լուծել *խաղաղ բանակցութեանց* մամբով, և երէկի թշնամիներու միջեւ յարաբերութիւնները հարկ է *բնականոնացնել*։

Այս միտքը մարմնաւորող պատճառաբանութիւն որպէս կ'առաջարկեմ՝ օրինակի համար, հետեւեալ քանաձեւումը. -

«Տարագիր Հայութիւնը կը պահանջէ՝

«Վերացնել հետեւանքները Օսմ. Կայսրութեան սկսած և արդի

Թուրքիոյ կողմէ շարունակուող մարդու իրաւանց սոնակոխումներուն, ցեղասպանութեան ու բռնահանումի ոճիրներուն, բռնահանումի հետեւանքով շարունակուող հայրենագրելումին, ինչպէս նաեւ՝ «լքեալ դոյքեր»ու պատրուակով կատարուած պետական թալանի պատճառած նիւթական գրկանքներուն: Տարագիր Հայութիւնը կը պահանջէ նաեւ՝ պատճառուած վնասներուն փոխհատուցումը, որպէսզի՝ կարելի դառնայ բնականոնացնել յարաբերութիւնները Տարագիր Հայութեան, որ իրաւաջաջորդն է Արեւմտահայութեան, և Թուրքիոյ միջեւ, որ իրաւաջաջորդն է Օսմ. Կայսրութեան, օգտուողը անոր ժառանգութենէն և շարունակողը անոր մարդկութեան դէմ գործած ոճիրներուն:

«Մերժելով Տարագիր Հայութեան օրինական պահանջները՝ հայրենք վերադառնալու, վերատիրանալու Արեւմտահայութեան շարժումն և անշարժ հարստութեան և համապատասխան հատուցում ստանալու, արդի Թուրքիան՝ ինք է որ կը մերժէ յարգել միջազգային նորմերն ու իրաւունքի դեակգրունքները, և՝ բնականոնացնել Հայ-Թուրք յարաբերութիւնները, արդար և մնայուն հիմերու վրայ»: Կարելի է մշակել այլ տարբերակներ ալ:

4. — Ճիշդ է թէ տակաւին կեանքի չէ կոչուած 1920-էն ի վեր նախատեսուած *Միջազգ. Պատժական Մնայուն Ատեանը*, բայց վերջին տարիներու դրական զարգացումներէն է նաեւ այն՝ որ տակաւ կը բազմաճան «մարդկութեան դէմ գործուած ոճիրները» դատելու յատուկ միջազգային ատեաններ, հիմնարկներու նախաձեռնութեամբ կազմուած դատարաններն ու մոյնիսկ՝ ազգային դատարաններու առջեւ նման ռեազործներ դատելու, և՝ այլ դրական երեւոյթները:

Արագ ակնարկով մը կ'ուզեմ այստեղ ուրուագծել պատերազմի ռիսկներու և մարդկութեամ դէմ գործուած ռիսկներու և ռեազործներու ցարդ տեղի ունեցած հիմնական դատավարութեանց զարգացման հոլովոյթին ընդհանուր կորագիծը:

ա. — Ա. աշխարհամարտի վաղորդայնին, յաղթական դաշնակիցները թեւ նախատեսած էին կազմել՝ բացի *Միջազգային քաղաքային մնայուն դատարանէն* (նստատեղին Լաիէյի մէջ), նաեւ՝ *միջազգային պատժական մնայուն դատարան* մը, սակայն չկազմուեցաւ այդ: Հետեւաբար, պատերազմի գերմանացի ռեազործները դատուեցան գերմանական զինուորական դատարանին առջեւ, ձեւականօրէն, իսկ Երիտթուրք ռեազործները՝ օսմանեան զինուորական դատարանին առջեւ, դարձեալ *ձեւականօրէն*: Ուրեմն, չկար *միջազգային դատարան*:

բ. — Բ. աշխարհամարտի վաղորդայնին, դարձեալ չկազմուեցաւ



Միջազգ. Պարժ. Մնայուն Ատեանը: Պատերազմի ճափոնցի ոճ-  
րագործները դատուեցան Թոֆիոյի մէջ կազմուած *յատուկ* (ոչ մնա-  
յուն) *միջազգային գինուորական* դատարանին առջեւ, իսկ գերմանացի  
ոճրագործները՝ Նիւրեմպերկի մէջ կազմուած *յատուկ միջազգ. գինու-  
րական* դատարանին առջեւ: Այստեղ՝ *յողթականները* կը դատէին  
*պարտեալները*:

գ. — Մարդկայնական ու մարդասիրական իրաւունքի ամրապնդումի  
ուշագրաւ փորձ մըն էր անգլիացի աշխարհահռչակ փիլիսոփայ  
Պէրթրամտ Ռասըլի նախձեռնած «Միջազգային Դատարան»ը, որ  
այնուհետեւ կոչուեցաւ իր անունով, և որում առջեւ դատուեցան  
ԱՄՆ-ի Վարչութեան պատասխանատուները՝ որպէս *մարդկութեան  
դէմ ոճրագործներ*, Վիէթնամի ժողովուրդին ու Ամերիկայի բնիկ  
հնդիկներուն դէմ իրենց գործած ոճիրներում համար: Այս դա-  
տարանը կազմուած էր համաշխարհային հեղինակութիւն վայելող  
դատաւորներ և իրաւագետներ, որոնք այսպիսով *աշխարհի մտաւո-  
րականութեան խիղճին դատաստանն* է որ կը կատարէին, և հետեւաբար,  
դատարանը գուրկ էր պատժամիջոցներ և կը գոհամար գուտ *բարոյա-  
կան* դատապարտութեամբ:

դ. — Կը յաջորդէր՝ 1984 թ. Ապրիլի 16-ին, Բարիզի (Սորպոնի)  
«ժողովուրդներու Մնայուն Դատարան»ը, որ կազմուած էր Լէիօ Պասսօ  
Միջազգ. Հիմնարկին կողմէ, և որում առջեւ դատուեցան «պետու-  
թեան իրաւավիճակէն զրկուած ժողովուրդներու դէմ գործուած ոճիրներն  
ու ոճրագործները», այսինքն՝ երիտօրֆական կառավարութեամ և ար-  
դի Թուրքիոյ պատասխանատուները, հայերու և ֆիւրտերու դէմ  
անոնց գործած ցեղասպանութեամ և այլ «մարդկութեան դէմ  
գործուած» ոճիրներում համար: Այս մէկն ալ գուրկ էր պատժա-  
միջոցներ և հատուցում պարտադրելու միջոցներ, և սակայն մեծ  
նշանակութիւն ունեցաւ Հայ Դատի գէթ *բարոզչական միջազգայնա-  
ցումին* տեսակետէն, և ընդգծեց «պետութեան իրաւավիճակէն զրկուած  
ժողովուրդներու» պաշտպանութեան անհրաժեշտութիւնը՝ *բաղաճա-  
կիրք* աշխարհի մը մէջ...

ե. — Մասնաւոր ուշադրութեան արժանի է նաեւ՝ 1993-ին, ՄԱԿ-  
ի Ապահովութեամ Խորհուրդին կողմէ կազմուած *միջազգային պատ-  
ժական յատուկ* դատարանը, որ պիտի դատէր «Նախկին Եռկոսնավիոյ  
մէջ գործուած պատերազմի ոճիրները» (Պոսմիոյ մէջ գործուած էթ-  
նիքական մաքրագործումները): Այս դատարանը, ԱՌՅՈՒԿ Բաս-  
սէտէի նախագահութեամբ և Քլիմօ Ուիլիամսոնի ընդհ. դատախա-  
զութեամբ, ներկայիս կը դատէ «անհատ ոճրագործները» (ինչպէս՝

Տոսան Թատիչը) և պետութիւններ (ինչպէս՝ Սերպիան) որոնք «ապաստան կու տան պատերազմի ռերագործներուն»: Այլ խօսքով, Սերպիան՝ որ պարտեալ պետութիւն չէ, պիտի դատուի որպէս «ռերագործ պետութիւն» քանի՛ «ապաստան տուած է ռերագործներուն», եթէ նոյնիսկ՝ այդ ռեիքները գործուած չեն իր հրահանգով կամ՝ իր հողերուն վրայ, և եթէ՛ ոչ ռերագործը և ոչ ալ անոր գոհը կը կրեն սերպիական հպատակութիւն...: Ասիկա հսկայական թոնչք մըն է Միջագգ. Հանր. Իրաւունքի գարգացման հոլովոյթիմ մէջ: Այս նոր գարգացման գուգահեռաբար, կարելի է պահանջել «Նախկին Օսմանեան Կայսրութեան մէջ գործուած պատերազմի ռեիքները դատող Միջագգ. Գաղտնական Դատարան» մը, դատելու համար արդի Թուրքիոյ պետութիւնը՝ որպէս «ռերագործ պետութիւն», քանի որ այս պետութիւնը այսօր «կը պատուէ ու կը հերոսացնէ Թալէաթ ու էնվէր անուն ռերագործները՝ յուշարձանով ու պանթէոնով», միմչ, այդ ռերագործները՝ 1919-ին, դատապարտուած էին նոյնիմք օսմանեան զինուորական ստեաններուն կողմէ, որպէս պատերազմի ռերագործներ:

գ. — Ուշագրաւ գարգացում մըն է Ասի պահպանողական Մեծմ Բրիտանիոյ մէջ, ընթացիկ տարուան Ապրիլին, Ասիկին նացի ռերագործի մը դատուիլը՝ Բրիտանական դատարանի առջեւ, հակառակ անոր՝ որ ռեիքը գործուած չէ Բրիտանիոյ հողերուն վրայ, բրիտանացիի մը կողմէ կամ՝ բրիտանահպատակի մը դէմ: Առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, կը քաւէ գիտնալ՝ որ 1991-էն ի վեր House of Commons-ի և House of Lords-ի միջեւ ընթացող վէեր աւարտեցաւ առաջինին յաղթանակով, և Թագուհին ստորագրեց առաջինին ներկայացուցած օրինագիծը, որուն դէմ Լորտերու Տունը առաջ կը քշէր հետեւեալ առարկութիւնները. —

— Թէ՛ շուրջ կէս դար անցեր էր յիշեալ ռեիքիմ գործադրութեան թուականէն...

— Թէ՛ այդ ռեիքը գործուած չէր բրիտանական հողի վրայ,

— Եւ թէ՛ այդ ռեիքիմ ոչ հեղինակը և ոչ ալ գոհը բրիտանահպատակներ եղած են: Եւ՝ կը մերժէր օրինագիծը:

Յաղթանակող House of Commons-ի պատասխան պատճառաբանութիւններն էին. —

— Թէ՛ մարդկութեան դէմ գործուած ռեիքները անտամանցելի են, և

— Թէ՛ այն պետութիւնները, որոնք ստորագրած են մարդկութեան դէմ գործուած ռեիքները դատապարտող միջագգ. Convention-ը, իրաւասու են դատելու այս կարգի ռեիքներն ու ռերագործները՝

տոանց *ժամանակային* և *տարածքային* սահմանափակումի... :

Այսպիսով *միջազգային* իրաւունքի գերակշռութիւնը կը նուիրագործուի *ազգային-տեղական* իրաւունքի նկատմամբ, ինչ որ Միջազգ. Հանր. իրաւունքի գորացման ու ամրապնդումին նշանն է, որ ցուցանիչ մըն է նաեւ՝ մարդկային քաղաքականութեան մակարդակի բարձրացման:

է. — Այս շատ հապշտապ ակնարկին վերջին կէտն ալ նորագոյն զարգացում մըն է, որ արձանագրուեցաւ Լիբանանի վրայ սիոնական վերջին ներխուժումին ու Կանայի ջարդին իրր հետեւանք: Կանայի մէջ նահատակուած մամուկներէն երկուքը ծնած ըլլալով ԱՄՆ-ի մէջ, կը կրէին ԱՄՆ-ի հպատակութիւն: Ամերիկացի Կանանց «Մատրի» կազմակերպութիւնը՝ Կանայի մէջ գործուած ջարդը նկատելով *Մարդկութեան դէմ գործուած ոճիր*, և՛ այդ ոճիրին հեղինակները նկատելով ոչ միայն Իսրայէլի պետութիւնը, այլև՝ ԱՄՆ-ի կառավարութիւնը, որպէս անմիջական *Ֆինանսաւորողը «Ներագործ պետութեան»*, դատական հայց ներկայացուցած է ԱՄՆ-ի Դաշնակցային Գերագոյն Դատարանին առջեւ՝ Իսրայէլի և ԱՄՆ-ի դէմ, որպէս *ներագործ պետութիւններ*: ԱՄՆ-ի դէմ դատը կը հիմնաւորուի՝ *Ֆինանսաւորումին* փաստով, մանուկներու ամերիկեան *Հպատակութեամբ*, իսկ դատահայց կազմակերպութեան պարագան այն պատճառաբանութեամբ՝ որ ԱՄՆ-ի փիմանսները կը գոյաման քաղաքացիներու վնասած տուրքերէն, և քաղաքացիներու իրաւունք ունի հաշիւ պահանջելու՝ թէ ո՞ր և ի՞նչ բանի կը ծախսուի իր վնասած տուրքերը: Եւ քանի որ ԱՄՆ-ը ստորագրած է մարդկութեան դէմ գործուած ռիսկներու դատապարտող միջազգային Convention-ը, հետեւաբար՝ ամերիկեան Դաշնակցային Դատարանը *իրաւաւոր է դատելու* Իսրայէլի *«Ներագործ պետութիւնը»*, Կանայի ջարդին հեղինակը, և՛ ԱՄՆ-ի կառավարութիւնը, *«Ներագործ պետութիւնը Ֆինանսաւորողը»*... :

Այս խիստ հակիրճ ակնարկն ալ քաւարար է գաղափար մը տալու համար թէ ինչպիսի հմարաւորութիւններ կ'ընձեռնեն միջազգային իրաւունքի նորագոյն զարգացումները Հայ Դատի հետապնդումին համար: Սակայն, այս զարգացումներէն կարեւալ օգտուելու համար, Տարագիր Հայութիւնը՝ *ամէն բանէ առաջ*, և տոանց նոր ձգձգումներու, պարտի ստեղծել իր *կեդրոնական*, *ներկայացուցչական* ու *միակ լիազօր* մարմինը, որպէս *միասնական Հաւաքականութիւն*, որպէսզի ձեռք բերէ *«մտանդուած»*, *«մտարանդի»*, *«Հայրենագուրկ»* ու *«պետականութենէ զրկուած»* ԺՈՂՈՎՈՒՐԴԻ իրաւական անձնաւերսութիւնը և միջազգային իրաւավիճակը: Եւ ապա՝ հետապնդել Հայ Դատը, *Հանգա-*

մանորէն, Հեղինակատրութեամբ ու արդիւնաւետ կերպով: Տարագիր Հայութեան կեդրոնական այդ մարմինը կրնայ բխիլ Տարագիր Հայութեան Համաշխարհային Գոնկրէտէն՝ որպէս Գործադիր Մարմին, և ՄԱԿ-էն ներս ձեռք բերել «Իէտ»ի կարգավիճակ (ինչպէս պաղեստինեան ՊԱԿ-ը), և ստեղծել շարք մը ոչ-կառավարական միջազգային կազմակերպութիւններ (NGO), իրաւամշիւրիմ տալով մասնաշատուկ պաշտօն մը, ևն...:

## Գ. – ԶՈՎԱՏՆԵՐՈՒ ԱՆԱԿՆՈՒԹԵԱՆ ՍԿԶՔՈՒՆՔԸ

Վերադառնալով Համահայկական Գոյամարտի երեք ջոկատներու նկատառելի և այլաբնոյթ տարբերութեանց հարցին, տեսանք՝ թէ ջոկատներու ունեցած *իրաւավիճակներու* տարբերութիւնները, աշխատանքի ու պայքարի տարբեր կարգախօսանք, տարբեր առաջադրանքներ և տարբեր մարտավարութիւններ կը պարտադրեն:

Հետեւաբար, հարկ է որ յարգուի՝ երեք ջոկատներու *կազմակերպչական* անկախութեան և պաշտօններու քաժանումի սկզբունքը: Պաշտօններու քանական քաժանումն ու ջոկատներու կազմակերպչական անկախութիւնը հրամայական կը դառնան՝ ոչ միայն *գործնականութեան* և *արդիւնաւետութեան* մտահոգութիւններով, այլեւ՝ մեր կամքէն անկախաբար, *միջազգային իրաւունքի* և *քաղաքադիւանագիտական* թելադրանքներով:

Երեք ջոկատներու իրայատուկ պաշտօններու և իրարմէ կազմակերպչական անկախութեան սկզբունքին ոտնակոխումը, կամ՝ միւս ջոկատներու պաշտօններէն ու կազմակերպչական կառոյցներէն ներս ոտնձգութիւնը ջոկատի մը կողմէ՝ ոչ միայն ներքին, *միջջոկատային* անտեղի *պառակտումներու* դուռ կը բանան, *տկարացնելով* միջ-ջոկատային խիստ կարեւոր *գործակցութիւնը*, այլեւ՝ *միջազգային իրաւական* ու *քաղաքադիւանագիտական* խառնաշփոթութիւններ կը ստեղծեն, քարդացնելով, խոչընդոտելով և նոյնիստ *չէզոքացնելով* ջոկատներու արդիւնատէտ աշխատանքը, և մինչեւ իսկ *հարցականի տակ* դնելով ջոկատներու առաջադրանքներուն ու պահանջներուն *օրինականութիւնն* ու *արդարացիութիւնը*...:

Օրինակ՝ արցախահայութեան *ազատ ինքնորոշման* իրաւունքը, որ նանչցուած է Միջազգ. Հանր. Իրաւունքի մէջ՝ որպէս արդար իրաւունք և օրինական ցանկութիւն, *այլասերեցաւ* ու *մերժուեցաւ*՝ միջազգային մակարդակի վրայ, երբ հարցը դրուեցաւ Արցախը ՀՀ-ին միացնելու պահանջի քանաձեւումին մէջ: Որովհետեւ՝ մեկնա-

բանուեցաւ որպէս ՀՀ կողմէ Ատրպէյճանէն հողատարածք կորցելու և իրեն բռնակցելու արարք, որ դատապարտուած է միջազգային իրաւունքին մէջ, և կը նկատուի պատերազմի յայտարարութեան համագորարարք: Եւ այնքան ատեն՝ որ ԼՂՀ անկախութեան հռչակումը միջազգային ճանաչում ձեռք չէ բերած, այդ քայլը կը նկատուի որպէս Ատրպէյճանի *հողային ամբողջականութիւնը* ոտնակոխող մերժելի արարք...:

Ուրիշ օրինակ մը՝ Տարագիր Հայութեան ջոկատի պահամջատիրութենէն: Հայրենագուրկ, վտարանդի ու վտանգուած ժողովուրդիմ (Տարագիր Հայութեան) *հայրենիք վերադառնալու* իրաւունքը, որ նանչցուած է Միջազգ. Հանր. Իրաւունքիմ մէջ, կ'այլասերի և կը մերժուի՝ եթէ գայն Աերկայացնելու ըլլայ ՀՀ-ը, և կը մեկնաբանուի՝ որպէս ՀՀ կողմէ Թուրքիայէն հողայիմ բռնակցում կատարելու ցանկութիւմ, որում դեմ Թուրքիա կրնայ արժեցնել՝ իր *հողային ամբողջականութիւնը* պահպանելու իրաւունքը:

Այլ խօսքով, ՀՀ-ը չի կրնար՝ *փոխանորդաբար* սփիւռֆացած Արեւմտահայութեան (որ հպատակմ էր Օսմ. պետութեան), Թուրքիոյ Աերկայացնել Տարագիր Հայութեան պահանջները: Բնականաբար՝ միեւնոյն պատճառաբանութեամբ ալ, ՀՀ-ը չի կրնար նաեւ՝ *հրաժարիլ* Տարագիր Հայութեան պահամջատիրութենէն, առանց օրինաւորապէս լիազօրուած ըլլալու Տարագիր Հայութեան կողմէ:

Բայց՝ եթէ Տարագիր Հայութիւնը շարունակէ մնալ իր Աերկայի *անդիմադիծ, տարրալուծուող* և *իրաւական անձնաւորութենէ* զուրկ վիճակիմ մէջ, կը պատահի ՄԵՄԱԳՈՅՆ ԱՂԵՏԸ...: Այդ ահաւոր պարագային, Հայաստանի Հանրապետութեան և Թուրքիոյ միջեւ ամեն *մերձեցում* կամ *բնականոնացում* յարաբերութեանց, ուղղակիօրէն կը հարուածէ Տարագիր Հայութեան կենսական շահերը և կը սպառնայ թաղել Հայ Դատը: Այս ուղղութեամբ ծանօթ է Ֆրանսական կառավարութեան յայտարարութիւնը: Քսանամեակէ մը իվեր՝ Ֆրանսական Խորհրդարանիմ մէջ իր ղնարկումին ու վաւերացումին կը սպասէր 245 համարաթիւր կրող օրէնքի Ասիագիծ մը, որ կը պահանջէր Ֆրանսայի պետութեան պաշտօնական ճանաչումը Հայկական Տեղասպանութեան: 1982 թ. Սեպտ.իմ՝ երբ երեսփոխան ժան-Գլոս Լըֆոն օրուան վարչապետուի էտիթ Քրեստնէն կը պահանջէր Խորհրդարանի օրակարգին վրայ անցընել ճանաչման օրինագիծը, կառավարութիւնը կը պատասխանէր՝ թէ *«այլեւ ճանաչումը օրակարգի հարց մը չէր՝ հայ-թրքական յարաբերութեանց բարեշրջութեան պատճառով»*...: Այսինքն՝ երբ հայկական կողմը կը ներ-

կայացուէր ՀՀ կողմէ, որ չէր ներկայացնէր նման պահանջ մը մարտավարական մտահոգութեամբ, և՛ գոյութիւն չունէր այլ հայկական կողմ մը (Տարագիր Հայութիւնը), ուրեմն, փրճասական կառավարութիւնը պատճառ մը չունէր՝ ՀՀ-էն աւելի պահանջկոտ ներկայանալու, հայերը շահագրգռող այս հարցին մէջ...:

Միւս կողմէ՝ ահա 4-5 տարիներէ ի վեր, մեմֆ սկանատես կ'ըլլանք այն պառակտումներուն ու քաղաքացիական պատերազմներուն, — ՀՀ-ի և Տարագիր Հայութեան ջոկատներուն միջեւ —, որոնք հետեւանքն են՝ իւրաքանչիւր ջոկատի պաշտօններու քաժանման ու կազմակերպչական իրաւասութեանց սահմաններու ռոնակոյտումին ու փոխադարձ ռոնձգութեանց...:

Համահայկական Գոյամարտի շահերուն տեսակէտէն, միակ ազգօգուտ գործելակերպը պիտի ըլլար՝ յարգել իւրաքանչիւր ջոկատի յատուկ գոյամարտին առաջադրանքները և անոնց պաշտօններու քաժանումն ու կազմակերպչականօրէն իրարմէ անկախութեան սկզբունքը:

Թող իւրաքանչիւր ջոկատ լիովին փարի *իրեն յատուկ* գոյամարտին, և՛ իր սեփական ուսերուն վրայ վերցնէ իրեն յատուկ առաջադրանքին ամբողջական պատասխանատուութիւնը, և չմիջամտէ միւս երկու ջոկատներու գործերուն, այլ՝ միայն Անցակցի և օգնէ անոնց, անոնց պահանջած մարզին մէջ և անոնց պահանջած ձեւով, և՛ իր կարելիութեանց համաձայն, առանց՝ իր *ուրոյն գոյամարտէն* դասալիք ըլլալու, կամ՝ Առյուծիկ «*առժամաբար առկախելու*» գայն, քանի որ *գոյամարտ* մը, *լինել-չլինելու* կռիւ մը երբ կ'անկախուի՝ համազօր է անձնատուութեան և ի վերջոյ՝ անձնասպանութեան...:

Տարագիր Հայութեան անյապաղ վերակազմակերպումը՝ *կեդրոնական, ներկայացուցչական* ու *միակ լիազօր* խորհուրդի մը մէջ, ոչ միայն հրամայական մըն է հայապահպանումի և Հայ Դատի արդիւնատէտ հետապնդումին տեսակէտներով, այլեւ՝ հրամայական անհրաժեշտութիւն մըն է՝ *երեք ջոկատներու միջեւ գործակցութեան առողջ մթնոլորտի մը ստեղծումին տեսակէտէն*: Երբ Տարագիր Հայութիւնը կ'օժտուի կեդրոնական խորհուրդով մը, որ կը ներկայանայ որպէս *միակ լիազօր*, երեք ջոկատներու լիազօրները կրնան *գումարել՝ բարձրագոյն մակարդակի և գաղտնի ժողովներ* ու խորհրդակցութիւններ, *կատարել՝* իրաւասութեանց սահմաններու իրաւաբազմակից հշդումը, և *ներդաշնակել՝* երեք ջոկատներու գոյամարտերը, մարտավարութիւններն ու ռազմավարութիւնը, և *կանխել՝* ամէն ռոնձգութիւնն ու պառակտում: Եւ այս բոլորը՝ զօրացնելու համար Համա-

Դ. — ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հարկ է ժամ առաջ ազատագրուիլ՝ զգացական հայրենասիրութեան քմբեցուցիչէն, կուսակցամորութեան պառակտիչ ազդեցութեանն ու մենասիրութեան ազգաբանոյ ախտէն, ու որդեգրել՝ գիտական-առարկայական մտեցումը, իրաւաքաղաքագիտական մակարդակի գործելակերպը և քաղաքական ըսյանհորիզոն մտածողութիւնը:

Հարկ է ժամ առաջ փրկել սփիւռքացած Արեւմտահայութեան մնացորդացը՝ ՏԱՐԱԲՆԱԿ-ի մտայնութեանն, որ գիմք դարձուցած է անդիմագիծ ու կեղբոնախոյս քեկորներու, և գիմք մատնած՝ տարբարութեամբ և ի սպառ չեացումի վտանգին:

Հարկ է ժամ առաջ Տարագիր Հայութեան և մասնաւորաբար միջին և նորահաս սերունդին մօտ վերստեղծել ՏԱՐԱԳԻՐԻ գիտակցութիւնը և իմքնութեան համոզումը, և ՊԱՀԱՆՁԱՏԷՐԻ յանձնառութիւնը, և ստեղծել Տարագիր Հայութեան Համաշխարհային Քոնկրետը և անկէ բխելիք Գործադիր Մարմինը, որպէս կեղբոնական, ներկայացուցչական ու միակ լիազօր խորհուրդ: Որդեգի՝ Տարագիր Հայութիւնը օժտուի միջազգային իրաւական անձնաւորութեամբ, որպէս վտանգուած և հայրենագուրկ ժողովուրդ: Որպէսզի՝ ան լաւագոյնս կարենայ մղել իրեն յատուկ դոյամարտը, մաքի՝ լաւագոյնս կարենայ սատարել երեք ջոկատներու գոյամարտերու ներդաշնակումին ու միջ-ջոկատային առողջ գործակցութեան, ի գորացում՝ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻՆ:

Իրաւունք ունենալը ինքնին՝ դեռ բաւարար չէ անոր տիրանալու համար... այլ հարկ է՝

- Զկորսնցնել իրաւատէրի գիտակցութիւնը որ կու գայ ՏԱՐԱԳԻՐԻ իմքնութեան համոզումէն,
- Գործել որպէս յանձնառու պահանջատեր,
- Գործել նիշոյ ուղղութեամբ և ժամանակակից գիտական եղանակով, և
- Գործել մինչեւ ծայրը՝ յարատեւութեան ոգիով, առանց՝ ընկրկումի, առկախումի կամ յետաձգումի... Բանի որ դոյամարտի մէջ այդ քոյրը համագօր են անձնատութեան և ստոյգ՝ անձնատարութեան:

ՄԵԹՐ Գ. ՏԷՐՏԷՐԵԱՆ